

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 238-Ա

7 օգոստոսի, 2020 թվական

**ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 31-ի 1157-Ա, 1158-Ա, N 1159-Ա, 1162-Ա, N 1163-Ա, N 1164-Ա և օգոստոսի 3-ի N 1179-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի օգոստոսի 6-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) Ա/Ձ «Հեղինե Ալավերդյան», Արմավիրի մարզ գ. Սարդարապատ (ՀՎՀՀ 49565844).
- 2) Ա/Ձ «Վաչագան Պետրոսյան», Սյունիքի մարզ, ք.Սիսիան, Թումանյան 12 (ՀՎՀՀ 79801923).
- 3) Ա/Ձ «Քրիստինե Գալստյան», Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ,1Փ 4/6 (ՀՎՀՀ 20229432).
- 4) Ա/Ձ «Արևիկ Պետրոսյան», Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ 1 փկղ 3, (ՀՎՀՀ 43048703).
- 5) Ա/Ձ «Վարսենիկ Պետրոսյան», Տավուշի մարզ, գ. Հաղթանակ (ՀՎՀՀ 70918153).
- 6) Ա/Ձ «Կարապետ Դովլաթյան», Արարատի մարզ, ք. Արտաշատ Թորոմանյան 66-ին կից (ՀՎՀՀ 47823843).
- 7) Ա/Ձ «Սվետա Ղազարյան», Արարատի մարզ, ք. Արտաշատ Մռավյան 32 ա (ՀՎՀՀ 47861383).

8) Ա/Ձ «Անուշ Խաչատրյան», Արարատի մարզ, ք. Արտաշատ Մոսկյան 1Ա ,
(ՀՎՀՀ 47801541).

9) Ա/Ձ «Նինա Ավագյան», Վայոց ձորի մարզ, ք. Վայք, Շահումյան փող. (ՀՎՀՀ
77601186).

10) Ա/Ձ «Լիդա Պողոսյան», Գեղարքունիքի մարզ, գ. Լուսակունք 1 փողոց, 3
նրբանցք, 1 տուն, (ՀՎՀՀ 74352783):

2. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական
մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման
մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝
ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական
վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 07/08/20 17:53:25 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ